



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ  
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ

14 հոկտեմբեր 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07/02  
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Դավիթ Սարգսյանը, Զարինե Ղամբարյանը, Հասմիկ Վարդանյանը, Նարեկ Ալիխանյանը, Սուրեն Մելիքյանը, Վարդան Ավագյանը, Արմենուհի Մախչյանը, Նունե Սանթրոսյանը, Արա Մարտիրոսյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**  
Աշխեն Ամիրխանյան, Մխիթար Հովհաննիսյան, Հովհաննես Նաղդալյան,  
Գեվորգ Ամիրխանյան, Գագիկ Շահնազարյան, Մարինե Սահակյան,  
Գարունիկ Վարդանյան, Վարդան Գրիգորյան, Լիպարիտ Սանթրոսյան

**Նիստը վարում էր Համայնքի ղեկավարի պարտականությունները  
կատարող առաջին տեղակալ՝ Արման Բազինյանը**

**Նիստը արձանագրում էր՝ Սոնա Եգանյանը**

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սարի փողոց թիվ 12/2 հասցեի տնտեսական շինությունը և վերջինիս զբաղեցրած 77. 9քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:  
Ձեկ. Արման Բազինյան
2. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գայի փողոց թիվ 31/8 հասցեի մառանը և վերջինիս զբաղեցրած 19. 8քմ հողամասն վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին:  
Ձեկ. Արման Բազինյան
3. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 4/11 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 17. 7քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:  
Ձեկ. Արման Բազինյան
4. Դիլիջան համայնքի Հովք գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ «Երևան-Թբիլիսի խճուղի» հասցեի վարձակալության իրավունքով տրամադրված 5000.0քմ հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:  
Ձեկ. Արման Բազինյան
5. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 89/1 հասցեի 194..0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:  
Ձեկ. Արման Բազինյան
6. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 2801.4քմ ընդհանուր մակերեսով թվով 6 հողամասերը, հատուկ պահպանվող տարածքների հողերից 6423.7քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին:  
Ձեկ. Արման Բազինյան
7. Դիլիջան համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 007-Ա եվ 2024 թվականի հունվարի 12-ի թիվ 577- Ա որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին:  
Ձեկ. Արման Բազինյան
8. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող “Բնակավայրերի հողերից” 960.8քմ մակերեսով թվով 1 հողամասը և հատուկ պահպանվող տարածքների հողերից 325.0քմ մակերեսով թվով 1 հողամասը կառուցապատման իրավունքի մրցույթի ներկայացնելու, ինչպես նաև հողամասերի կառուցապատման իրավունքի տարեկան վճարների մեկնարկային գները հաստատելու մասին:  
Ձեկ. Արման Բազինյան
9. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 1802,3 քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, ինչպես նաև հողամասի վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին:  
Ձեկ. Արման Բազինյան
10. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:  
Ձեկ. Արման Բազինյան
11. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի

տեղական բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին:

Ձեկ. Արման Բազինյան

12. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի տեղական բյուջեի ֆոնդային մասում փոփոխություն կատարելու մասին:

Ձեկ. Արման Բազինյան

13. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

Ձեկ. Արման Բազինյան

14. Դիլիջան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 764-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Ձեկ. Արման Բազինյան

15. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող մի շարք ծածկագրով հողամասեր Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին:

Ձեկ. Արման Բազինյան

16. Դիլիջան համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Ձեկ. Արման Բազինյան

Համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արման Բազինյանն առաջարկեց օրակարգում ընդգրկել ևս 6 հարց՝

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Ձեկ. Արման Բազինյան

2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի տեղական բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին:

Ձեկ. Արման Բազինյան

3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի տեղական բյուջեի ֆոնդային մասում փոփոխություն կատարելու մասին:

Ձեկ. Արման Բազինյան

4. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

Ձեկ. Արման Բազինյան

5. Դիլիջան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 764-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Ձեկ. Արման Բազինյան

6. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող մի շարք ծածկագրով հողամասեր Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին:

Ձեկ. Արման Բազինյան

Համայնքի ավագանին (կողմ-12 դեմ-0 ձեռնպահ-0) ընդունեց առաջարկությունը և հաստատեց օրակարգը նոր խմբագրությամբ:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 774-Ա/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12/2 ՀԱՍՑԵԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՉԲԱՂԵՑՐԱԾ 77. 9ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. օգոստոսի 28-ի թիվ 936-Ա որոշմամբ, Դիլիջանի համայնքի Դիլիջան քաղաքի Սարի փողոց թիվ 12/2 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Արման Գառնիկի Համբարձումյանի կողմից ինքնակամ կառուցված 54. 72քմ արտաքին մակերեսով տնտեսական շինության նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 09092024-11-0046/:

Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Արման Համբարձումյանին՝ Դիլիջանի համայնքի Դիլիջան քաղաքի Սարի փողոց թիվ 12/2 հասցեի տնտեսական շինությունը՝ 54. 72քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 77. 9քմ հողամասը, համապատասխանաբար, 253464 դրամ և 532392 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:

Համայնքի ղեկավարը նշված տնտեսական շինությունը և վերջինիս զբաղեցրած 77. 9քմ հողամասը քաղ. Արման Գառնիկի Համբարձումյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջանի համայնքի Դիլիջան քաղաքի Սարի փողոց, թիվ 12/2 հասցեի տնտեսական շինությունը՝ 54. 72քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 77. 9քմ հողամասը, համապատասխանաբար, 253464 դրամ և 532392 դրամ արժեքներով քաղ. Արման Գառնիկի Համբարձումյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 775-Ա/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԱՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 31/8 ՀԱՍՑԵԻ ՄԱՌԱՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՉԲԱՂԵՑՐԱԾ 19. 8ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ**

**ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ  
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. օգոստոսի 22-ի թիվ 919-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գայի փողոց, թիվ 31/8 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Սիլվա Սամսոնի Պողոսյանի կողմից ինքնակամ կառուցված 16. 64քմ արտաքին մակերեսով մառանի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 06092024-11-0052/:

Քանի որ տվյալ մառանը կառուցվել է բազմաբնակարան շենքերի բակային տարածքում, ուստի գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Սիլվա Պողոսյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գայի փողոց, թիվ 31/8 հասցեի մառանը՝ 16. 64քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 19. 8քմ հողամասը, վարձակալության իրավունքով 11178 դրամ տարեկան վարձավճարով, մինչև 2060թ. դեկտեմբերի 31-ը ժամկետով, որի վերաբերյալ վերջինս տվել է իր համաձայնությունը: Համայնքի ղեկավարը նշված մառանը և վերջինիս զբաղեցրած 19. 8քմ հողամասը քաղ. Սիլվա Սամսոնի Պողոսյանին վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գայի փողոց, թիվ 31/8 հասցեի մառանը՝ 16. 64քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 19. 8քմ հողամասը, 11178 դրամ տարեկան վարձավճարով մինչև 2060թ. դեկտեմբերի 31-ը ժամկետով քաղ. Սիլվա Սամսոնի Պողոսյանին վարձակալության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 776-Ա/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/11  
ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 17. 7ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ  
ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. սեպտեմբերի 11-ի թիվ 993-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 4/11 հասցեի

համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Բորիս Բաբկենի Սահակյանի կողմից ինքնակամ կառուցված 17. 7քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 04102024-11-0053/: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Բորիս Սահակյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 4/11 հասցեի ավտոտնակը՝ 17. 7քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 17. 7քմ հողամասը, համապատասխանաբար, 48233 դրամ և 186095 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:

Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 17. 7քմ հողամասը քաղ. Բորիս Բաբկենի Սահակյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 4/11 հասցեի ավտոտնակը՝ 17. 7քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 17. 7քմ հողամասը, համապատասխանաբար, 48233 դրամ և 186095 դրամ արժեքներով քաղ. Բորիս Բաբկենի Սահակյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 777-Ա/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՔ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ «ԵՐԵՎԱՆ-ԹՔԻԼԻՍԻ ԽՃՈՒՂԻ» ՀԱՍՑԵԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 5000.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Արթուր Աղաջանյանը՝ Դիլիջան համայնքի Հովք գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ «Երևան-Թբիլիսի խճուղի» հասցեի 5000.0քմ հողամասը, որի նկատմամբ ունի վարձակալության իրավունք, ուղղակի վաճառքի ձևով իրեն օտարելու խնդրանքով:

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1152425 վկայականի /տրված 06.05.2005թ./, «Երևան-Թբիլիսի խճուղի» հասցեի 5000.0քմ հողամասի վարձակալ է հանդիսանում քաղ. Արթուր Աղաջանյանը: Նշված 5000.0քմ մակերեսով հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված

հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասնհինգերորդ գոտում: Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Հովք գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ «Երևան-Թբիլիսի խճուղի» հասցեի 5000.0քմ հողամասը ուղղակի վաճառքի ձևով, նախապատվության իրավունքով, 3960000 /երեք միլիոն ինը հարյուր վաթսուն հազար/ դրամ արժեքով օտարել քաղ. Արթուր Էդուարդի Աղաջանյանին: Դեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Հովք գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ «Երևան-Թբիլիսի խճուղի» հասցեի 5000.0քմ հողամասը, որի նկատմամբ քաղ. Արթուր Աղաջանյանն ունի վարձակալության իրավունք, նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով, 3960000 /երեք միլիոն ինը հարյուր վաթսուն հազար/ դրամ արժեքով քաղ. Արթուր Էդուարդի Աղաջանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 778-Ա/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 89/1 ՀԱՍՑԵԻ 194.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ջեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Դիլիջանի համայնքի ղեկավարին են դիմել քաղաքացիներ Ազատ Մերուժանի Ավետիսյանը և Արթուր Մերուժանի Ավետիսյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 89 հասցեի, իրենց սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման 450.0քմ հողամասին կից գտնվող /Կամոյի փողոց թիվ 89/1 հասցեի/ 194.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրենց օտարելու խնդրանքով:

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 194.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:

Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 89/1 հասցեի

194.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 1325855 /մեկ միլիոն երեք հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամ արժեքով օտարել քաղաքացիներ Ազատ Մերուժանի Ավետիսյանին և Արթուր Մերուժանի Ավետիսյանին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 89/1 հասցեի հասցեի 194.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 1325855 /մեկ միլիոն երեք հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամ արժեքով քաղաքացիներ Ազատ Մերուժանի Ավետիսյանին և Արթուր Մերուժանի Ավետիսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 779-Ա/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 2801.4ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 6 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ, ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 6423.7ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 2801.4քմ ընդհանուր մակերեսով թվով 6 հողամասերը, հատուկ պահպանվող տարածքների հողերից 6423.7քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը՝ աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 2801.4քմ ընդհանուր մակերեսով թվով 6 հողամասերը,



հատուկ պահպանվող տարածքների հողերից 6423.7քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:  
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 780-Ա/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 007-Ա ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 577- Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետ համաձայն դադարեցվել է համայնքի ավագանու անդամ Վարդան Թամրազյանի լիազորությունները: Հետևաբար դադարեցվել է վերջինիս <<Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի>>, <<Ենթակառուցվածքներին և իրավական հարցերին առնչվող Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի>> և «Հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողովի» անդամի լիազորությունները:

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանու կանոնակարգի 33-րդ կետի պահանջներով՝

1. Կատարել փոփոխություններ Դիլիջան համայնքի ավագանու հետևյալ որոշումների մեջ.

1) Դիլիջան համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին>> թիվ 007-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝

ա) <<Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի>> անդամ Վարդան Թամրազյանի փոխարեն հանձնաժողովի կազմում ընդգրկել Արմեն Թալանջանին:

բ) <<Ենթակառուցվածքներին և իրավական հարցերին առնչվող Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի>> անդամ Վարդան Թամրազյանի փոխարեն հանձնաժողովի կազմում ընդգրկել Արմեն Թալանջյանին:

2) 2024 թվականի հունվարի 10-ի «Դիլիջան համայնքի ավագանու 2022թ. ապրիլի 05-ի թիվ 089-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 577-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝

«Հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողովի» անդամ Վարդան Թամրազյանի փոխարեն հանձնաժողովի կազմում ընդգրկել Արմեն Թալանջյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող Արման Բազինյանն առաջարկեց նշված հանձնաժողովների կազմում Վարդան Թամրազյանի փոխարեն ընդգրկել համայնքի ավագանու ՔՊ խմբակցության անդամ Արմեն Թալանջյանին: Համայնքի ավագանին քվեարկությամբ (կողմ-12 դեմ-0 ձեռնպահ-0) ընդունեց առաջարկությունը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 781-Ա/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ “ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ” 960.8ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 1 ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 325.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 1 ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 960.8քմ մակերեսով թվով 1 հողամասը և հատուկ պահպանվող տարածքների հողերից 325.0քմ մակերեսով թվով 1 հողամասը մրցութի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 960.8քմ մակերեսով թվով 1 հողամասը և հատուկ պահպանվող տարածքների հողերից 325.0քմ մակերեսով թվով 1 հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցույթի ներկայացնելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել հողամասերի կառուցապատման իրավունքի տարեկան վճարների մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 782-Ա/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 1802. ՅՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Դիլիջանի համայնքի ղեկավարը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 1802. Յքմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, մակերեսով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 1802. Յքմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 783-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ջեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Համաձայն Դիլիջանի համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի միջև կնքված կապիտալ սուբվենցիայի հատկացման 18.09.2024թ. թիվ 13 պայմանագրի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացվել է 163 239 800 (մեկ հարյուր վաթսուներեք միլիոն երկու հարյուր երեսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ կապիտալ սուբվենցիա Դիլիջան համայնքի Թեղուտ և Աղավնավանք բնակավայրերում ջրագծի կառուցման /Թեղուտ/ աշխատանքների համաֆինանսավորման նպատակով: Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է նշված գումարը ճանաչել որպես եկամուտ և ծախս «06-03-01» /Ջրամատակարարման ցանցի կառուցում/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգմամբ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 163 239 800 (մեկ հարյուր վաթսուներեք միլիոն երկու հարյուր երեսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ կապիտալ սուբվենցիան ճանաչել որպես եկամուտ՝ սուբվենցիոն եկամտային հաշվին:

2. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 163 239 800 (մեկ հարյուր վաթսուներեք միլիոն երկու հարյուր երեսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ կապիտալ սուբվենցիան ճանաչել ծախս և ուղղել «06-03-01» Դիլիջան համայնք /Ջրամատակարարման ցանցի կառուցում/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման սուբվենցիոն ծախսային հաշվի 5113 հոդվածին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 784-Ն/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. «01-03-03» Դիլիջան համայնք /Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 4217 /արտագերատեսչական ծախսեր/ ծախսային հոդվածից նվազեցնել՝ 2 600 000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, 4241 /մասնագիտական ծառայություններ/ ծախսային հոդվածից՝ 7 500 000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. «01-01-01» Դիլիջան համայնք /Դիլիջանի քաղաքապետարան/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 4222 /արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր/ ծախսային հոդվածին ավելացնել՝ 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ, 4221 /ներքին գործուղումներ/ ծախսային հոդվածին՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ և 4237 /ներկայացուցչական ծախսեր/ ծախսային հոդվածին՝ 7 800 000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար):

3. Սույմն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 785-Ն/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. «01-01-01» Դիլիջան համայնք /Դիլիջանի քաղաքապետարան/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ ծախսային հոդվածից նվազեցնել՝ 15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ,

2. «08-01-01» Դիլիջան համայնք /Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ ծախսային հոդվածին ավելացնել՝ 12 000 000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ, «08-02-02» Դիլիջան համայնք /Թանգարաններ և ցուցասրահներ/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ ծախսային հոդվածին՝ 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:

3. Սույմն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 786-Ն/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Դիլիջան համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին Դիլիջան համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն կից հավելվածների:

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 787-Ն/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 764-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 764-Ա որոշման 1-ին կետում և նույն որոշման հավելվածի 1-ին կետում «Էդվարդ Թամամյան» բառերը փոխարինել «Սեդա Թովմասյան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 788-Ա/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ  
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ  
ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/**

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0029-0004 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.00315հա հողամասը, 11-003-0398-0008 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.01017հա հողամասը, 11-003-0408-0003 կադաստրային ծածկագրով 0.07448հա հողամասը, 11-003-0408-0002 կադաստրային ծածկագրով 0.06917հա հողամասը, 11-003-0209-0003 և 11-003-0209-0004 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 0.45118հա հողամասը, Թեղուտ գյուղի 11-029-0048-0007 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.03147հա հողամասը, 11-029-0009-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.05255հա հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0029-0004 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.00315հա հողամասը, 11-003-0398-0008 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.01017հա հողամասը, 11-003-0209-0003 և 11-003-0209-0004 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 0.45118հա հողամասը, Թեղուտ գյուղի 11-029-0048-0007 կադաստրային ծածկագրով

հողամասի մի մասը՝ 0.03147հա հողամասը, 11-029-0009-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.05255հա հողամասը, որոնք համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողեր:

2. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0408-0003 կադաստրային ծածկագրով 0.07448հա հողամասը, 11-003-0408-0002 կադաստրային ծածկագրով 0.06917հա հողամասը, որոնք համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Գյուղատնտեսական նշանակության հողերի վարելահողեր:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 789-Ա/

Լսեցին

**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Ջեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի նոյեմբերի 15-ին, ժամը 17:00-ին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 790-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌՈՐԵՐՏ ԱԼԻԽԱՆՅԱՆ



ԱՐՇԱԿ ԽԵՄՉՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԳՈՒԼԻՆՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ԹԱԼԱՆՉՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ԲՈԶԻԿՅԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

*Համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող  
առաջին տեղակալ*

ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ\_\_\_\_\_

*Նիստն արձանագրեց՝ Սոնա Եգանյանը*

---